

---

---

**ՀՀ-ՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ  
ՆԵՐԿԱ ՓՈԽԼԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ԳԵՎՈՐԳՅԱՆ Ն. Լ.

Վերջին տարիներին ՀՀ-ում իրականացված տնտեսական վերափոխումների շնորհիվ էական առաջընթաց է արձանագրվել շուկայական հարաբերությունների կայացման և զարգացման առումով: Դրա հետևանքով ձևավորվել են այն նվազագույն նախադրյալները, առանց որոնց հնարավոր չէ երկրում ապահովել շուկայական հարաբերությունների անցման ուղղությամբ իրականացվող միջոցառումների շարունակականությունը: Այդ ամենով հանդերձ՝ երկրի տնտեսական համակարգում դեռևս առկա են մի շարք լուրջ հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են տնտեսական վերափոխումների հետագա արդյունավետությունը: Այդ առումով, անկասկած, նախկին սկզբունքների վրա հիմնված տնտեսական քաղաքականության իրականացման միջոցով հնարավոր չէ դրանց լուծումը: Տնտեսական վերափոխումների ներկայիս փուլում, ուսումնասիրությունների համաձայն, հիմնական խնդիրներն են՝

- կայուն տնտեսական աճի ապահովման նպատակով ազգային կապիտալի կուտակման խթանում, աշխատատեղերի ստեղծում.
- պետության և տնտեսավարող սուբյեկտների շահերի և հետաքրքրությունների մերձեցում.
- փոքր և միջին ձեռնարկատիրության խթանում.
- տնտեսության միջազգային ինտեգրացման համար բարենպաստ պայմանների ստեղծում, համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության առավել լայն ինտեգրացում.
- հայրենական արտադրանքի իրացման շուկաների ընդլայնում.
- արտաքին առևտրի ազատականացման և համաշխարհային շուկայում ապրանքների և ծառայությունների մրցակցության ուժեղացման պայմաններում հայրենական ապրանք արտադրողների շահերի պաշտպանության ապահովում.
- Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների կրճատմանն ուղղված հաշվեկշռված տնտեսական քաղաքականության իրականացում.
- միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության համագործակցություն.
- ապահովագրական, ներդրումային և բանկային գործունեության կարգավորման գործում պետության դերի բարձրացում.
- տնտեսական անվտանգության ապահովում.
- վերափոխումների իրավական ապահովում և օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմների ստեղծում.
- տնտեսական ազատականացման և տնտեսության պետական կարգավորման միջև ներդաշնակ հարաբերակցության հաստատում.

• գիտատեխնիկական, տեխնոլոգիական և արտադրական ներուժի պահպանում և զարգացում, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացում, տնտեսական աճի և ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ապահովում.

• արտադրության կազմակերպման գործուն մեխանիզմների ձևավորման և ապրանքների իրացման ու ծառայությունների մատուցման ճանապարհով հասարակության և յուրաքանչյուր քաղաքացու բարեկեցության հնարավոր առավելագույն մակարդակի հասնելու նպատակով արդյունավետ և սոցիալական ուղղվածություն ունեցող շուկայական տնտեսության ձևավորում.

• Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքի կատարելագործում, գիտատար և վերամշակման բարձր մակարդակ ունեցող արտադրությունների զարգացում, ընդլայնված վերարտադրության հիմք համարվող ճյուղերին աջակցություն, բնակչության զբաղվածության ապահովում.

• ներդրումային ակտիվության բարձրացում, դրա պետական պաշտպանության ուժեղացում, տնտեսության շահերին համապատասխանող բանկային համակարգի ստեղծում, արդյունաբերության կառուցվածքային բարեփոխումների և կապիտալ ներդրումների ֆինանսավորման նպատակով պետական ծրագրային քաղաքականության իրականացում.

• մրցունակ ճյուղերի և արտադրությունների առաջանցիկ զարգացում, գիտատար արտադրանքի շուկայի ընդլայնում, առաջադեմ տեխնոլոգիաների զարգացում, հայրենական ձեռնարկությունների մրցունակության բարձրացում.

• գիտության և տեխնիկայի զարգացման առաջնահերթ ուղղությունների ֆինանսական և նյութական ռեսուրսների կենտրոնացում.

• առաջատար գիտական դպրոցներին պետական աջակցություն.

• գիտատեխնիկական ներուժի զարգացում.

• գիտահետազոտական մշակումների արդյունքների օգտագործում և հեղինակային իրավունքի պաշտպանությունն ապահովող պետական աջակցության ենթակառուցվածքների ձևավորում.

• եկամուտների բաշխման ոլորտում սոցիալապես արդարացի և տնտեսապես արդյունավետ քաղաքականության իրականացում.

• տնտեսության ոլորտում օրենսդրական դաշտի կատարելագործում և դրա կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում:

Նշված խնդիրների լուծումը ենթադրում է ընդհանուր տնտեսական քաղաքականության արմատական վերանայում: Այդ գործում ակնհայտորեն խիստ մեծ է պետության դերը, որին հիմնականում վերապահված է «խաղի կանոնների» սահմանման և դրանց պահպանման նկատմամբ խիստ վերահսկողություն իրականացնելու գործառույթ<sup>1</sup>:

<sup>1</sup> Գևորգյան Մ., Թամազյան Ա., *Հայաստանի անցումային տնտեսությունը*, Ե., 1997, էջ 48:

Հանրապետությունում պետական բյուջեի եկամտային մասի ձեկավորման ժամանակ պետք է հաշվի առնել այն, որ իրականացվող հարկային քաղաքականությունը դեռևս շատ հեռու է կատարյալ լինելուց: Տնտեսական նոր հարաբերություններին անցման փուլի համար հարկային բեռը բավականաչափ բարձր է, օրենսդրությունը խիստ բարդ է, հարկային ծառայությունների մասնագիտական և տեխնիկական հագեցվածությունը զգալիորեն ցածր է և այլն: Նման պայմաններում ստեղծվում է մի իրավիճակ, երբ բարեխիղճ հարկատուները կրում են ողջ հարկային ճնշումը այն դեպքում, երբ մի շարք խոշոր տնտեսավարող սուբյեկտներ խուսափում են հարկերի վճարումից կամ ընդհանրապես չեն վճարում:

Հարկաբյուջետային քաղաքականության գլխավոր խնդիրը միջնաժամկետ հեռանկարում պետք է լինի կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների ապահովման միջոցով տնտեսական զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծումը: Բյուջեի եկամտային բազան պետք է լինի ռեալ<sup>2</sup>: Ինչպես ցույց է տալիս փորձը, որպես կանոն, կառավարության կանխատեսումներն այս ուղղությամբ գրեթե միշտ չեն համապատասխանում իրականությանը:

Այդ առումով, ըստ իս, հանրապետության հարկային համակարգում իրականացվող վերափոխումները պետք է ունենան երեք հիմնական ուղղություն.

- հարկային դրույքաչափերի իջեցում և դրանց կայունացում.
- հարկային օրենսդրության պարզեցում.
- հարկային ծառայությունների մասնագիտական և տեխնիկական հագեցվածության

մակարդակի բարձրացում:

Կարծում եմ, նշված պահանջներին զուգահեռ՝ խիստ կարևորվում է նաև իրականացվող քաղաքականության կայունության և կանխատեսելիության ապահովումը:

Բացի վերը նշվածներից, հարկային վերափոխումների իրականացման ժամանակ պետք է կարևորվեն՝

- արտադրության, նոր տեխնոլոգիաների, գիտության և կրթության զարգացման ոլորտներում ներդրումների նկատմամբ հարկային արտոնությունների ճկուն մեխանիզմի կիրառումը.

- սեփական արտադրանքով արտաքին շուկաներ դուրս եկած ընկերություններին սկզբնական փուլում հարկային արձակուրդների տրամադրումը.

- հարկման բազայի ընդլայնման ճանապարհով հարկային բեռի թեթևացումը.

- ակտիվ կառուցվածքային քաղաքականության իրականացման և հայրենական ապրանքների մրցունակության ապահովման անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ տնտեսության տարբեր ճյուղերում հարկային դրույքաչափերի տարբերակված մոտեցման կիրառումը:

---

<sup>2</sup> Կիրակոսյան Գ., Հարկաբյուջետային քաղաքականության զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2000, էջ 24:

Միևնույն ժամանակ, հանրապետությունում կարող է քննարկման առարկա դառնալ հետագայում հարկային բեռն աստիճանաբար տնտեսավարող սուբյեկտներից անձնական եկամուտների և գույքի վրա տեղափոխելու հարցը: Դա մի կողմից կխթանի այդ սուբյեկտների տնտեսական գործունեության ընդլայնմանը, մյուս կողմից կնպաստի հարկային համակարգի սոցիալական գործառնության առավել լիարժեք իրացմանը: Այս ուղղությամբ առաջին քայլը կարող է լինել որոշ հարկատեսակների, նախ և առաջ ավելացված արժեքի հարկի դրույքաչափի իջեցումը, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքատեսակների ցանկի ընդլայնումը, ինչը թույլ կտա բյուջետային մուտքերի մակարդակի պահպանման պայմաններում իջեցնել արտադրության ծախսերը: Բացի այդ, կարելի է հավատալ՝ բարձր եկամուտներ ունեցողների կողմից սպառվող որոշ ապրանքատեսակների գծով ակցիզային հարկի սահմանումը թույլ կտա նվազեցնել սոցիալական բևեռացվածության աստիճանը:

Հարկաբյուջետային վերափոխումների ընթացքում հիմնական շեշտը պետք է դրվի հարկային բեռի թեթևացման և ստվերային տնտեսության ծավալների կրճատման վրա: Հարկային թույլ վարչարարության պայմաններում հարկային բեռի թեթևացումը պետք է ուղեկցվի հարկային համակարգի պարզեցմամբ, ինչը հնարավորություն կտա ուժեղացնելու հարկային վերահսկողությունը: Հարկային եկամուտների կառուցվածքում պետք է փոխվի նաև պետական բյուջեի ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: Աստիճանաբար պետք է բարձրացնել ուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ ի հաշիվ անուղղակի հարկերի: Այս փուլում խիստ կարևորվում է եկամտահարկի և սոցիալական ապահովագրության վճարների դրույքաչափերի իջեցումը, ինչը թույլ կտա բացահայտել ստվերային եկամուտները: Նշված միջոցառումների իրականացման հետևանքով, ըստ ուսումնասիրությունների արդյունքների, պետական բյուջեի եկամուտների նվազումը կկրի կարճատև բնույթ, և ծավալները կլինեն փոքր<sup>3</sup>: Բյուջետային եկամուտների հնարավոր կրճատման փոխհատուցման նպատակով, կարծում եմ, անհրաժեշտ է՝

- բարձրացնել բյուջետային կարգապահությունը, սահմանել պետական պատվերների իրականացման մրցութային արդյունավետ կարգ.
- բարձրացնել մաքսային քաղաքականության արդյունավետությունը. բնական մենաշնորհի ոլորտներում, ինչպես նաև խոշոր հարկատուների նկատմամբ իրականացնել արդյունավետ հարկային քաղաքականություն.
- ուժեղացնել ստվերային տնտեսության դեմ պայքարը.
- բարձրացնել բյուջետային միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը.
- բարձրացնել պետական սեփականության կառավարման արդյունավետության աստիճանը և այլն:

<sup>3</sup> Дернберг Р. Л. *Международное налогообложение*, М., 1997, с. 375.

Տնտեսության ստվերային հատվածի կրճատման հաշվին բյուջեի եկամտային մասի ավելացման չափերի հաշվարկը դժվարանում է հատկապես այն հանգամանքով պայմանավորված, որ հանրապետությունում մինչև այժմ ստվերային տնտեսության ծավալների գնահատման ուղղությամբ համալիր միջոցառումներ չեն իրականացվում: Այդուհանդերձ, առաջիկա ժամանակահատվածում պետական բյուջեի եկամտային մասի ավելացման հիմնական աղբյուր կարող է դառնալ ստվերային տնտեսությունը, որի ծավալների կրճատմանն ուղղված միջոցառումները պետք է մի կողմից պայմանավորված լինեն հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմամբ, իսկ մյուս կողմից՝ օրենսդրական դաշտի կատարելագործմամբ: Իհարկե, ստվերային տնտեսության դեմ պայքարը չի կարող սահմանափակվել միայն վարչարարական մեթոդներով: Դրա համար պետք է երկրում ձևավորել այնպիսի տնտեսական միջավայր, որի պայմաններում գործող տնտեսավարող սուբյեկտները ցանկություն ունենան վճարելու հարկեր և ստանալու օրինական եկամուտներ: Այդ նպատակով անհրաժեշտ է հարկային քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ նախապատվությունը տալ հարկերի կարգավորիչ գործառնության իրացմանը:

ՀՀ հարկաբյուջետային ոլորտում վերջին տարիներին իրականացված վերափոխումների ընթացքում հիմնականում փորձ է կատարվել հարկային բեռի բարձրացման ճանապարհով լուծել տնտեսական համակարգում առկա մի շարք հիմնախնդիրներ: Սակայն, պետք է նշել, որ տնտեսական ծանր իրավիճակում նման քայլերը, որպես կանոն, գրեթե միշտ հանգեցնում են ստվերային տնտեսության ընդլայնմանը: Նման իրավիճակում հարկային բեռի փաստացի ծանրությունը կրում են այն հարկատուները, որոնք ցանկություն կամ հնարավորություն չունեն գործելու ստվերային դաշտում: Նման քաղաքականության գլխավոր թերությունն այն է, որ պետական ծախսերի ֆինանսավորման ծանրությունը դրվում է օրինապահ հարկատուների և միջին եկամուտներ ունեցող քաղաքացիների վրա, ինչը հանգեցնում է ստվերային տնտեսության, թաքնված զբաղվածության ծավալների աճին և ներդրումային հնարավորությունների կրճատմանը<sup>4</sup>:

Նշված հիմնախնդիրների լուծման նպատակով, կարծում եմ, պետք է մշակվի հարկաբյուջետային վերափոխումների իրականացման միջնաժամկետ ծրագիր, որով կհստակեցվեն նպատակները և այդ ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ժամանակացույցը:

Առկա հիմնախնդիրների լուծման կարևորությունը պահանջում է արմատական վերափոխումների իրականացում հանրապետության հարկաբյուջետային ոլորտում: Ակնհայտորեն դա նախ և առաջ պետք է դրսևորվի համապատասխան օրենսդրական դաշտի կատա-

---

<sup>4</sup> **Բոստանջյան Վ.**, *Տնտեսական բարեփոխումները ՀՀ-ում և դրանց օրենսդրաիրավական ապահովվածության հիմնախնդիրները* (Էկոնոմիկա, 1999, N 4):

բելագործման մեջ, ըստ որի՝ կարևոր ուղղություններ պետք է հռչակվեն՝

- տնտեսության զարգացմանն ուղղված հարկային օրենսդրության ստեղծումը.

- արտադրության խթանումը և սոցիալական ապահովության մակարդակի բարձրացումը.

- ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով հարկային համապատասխան ռեժիմի սահմանումը:

Հարկաբյուջետային կարգավորման արդյունավետության բարձրացման նպատակով խիստ կարևորվում է նաև հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- արտադրության վերագործարկման և ընդլայնման նպատակով, հիմնավորված բիզնես ծրագրերի առկայության դեպքում, ցածր տոկոսադրույքներով վարկային ռեսուրսների հայթայթումը և տարեկան 8-12%-ով տրամադրումը.

- թեթև արդյունաբերության զարգացման նպատակով ներմուծման մաքսատուրքերի տարբերակված դրույքաչափերի կիրառում՝ 10-25%-ով բարձրացնելով ՀՀ-ում արտադրվող վերջնական արտադրանքի (կամ դրանց փոխարկիչների) ներմուծման մաքսատուրքերը.

- արտադրական նպատակով ներմուծվող (Հայաստանում չարտադրվող) հումքի, նյութերի և պահեստամասերի ազատումը ավելացված արժեքի հարկից՝ հարկելով միայն երկրի ներսում վերավաճառելու դեպքում.

- ներքին շուկայում մեծ պահանջարկ ունեցող հումքատեսակների համար արտահանման տարբերակված մաքսատուրքերի սահմանումը: Այդ հումքատեսակների արտահանումը սահմանափակելու նպատակով անհրաժեշտ է արտահանման մաքսատուրքերը 5-7%-ով բարձրացնել:

Պետական բյուջեի ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

- մշակել ներքին ռեսուրսների և օտարերկրյա ներդրումների փոխկապակցվածությունն ապահովող ներդրումային քաղաքականություն.

- ճիշտ գնահատել և համակարգել բյուջեով պայմանավորված ներդրումների նկատմամբ պահանջարկը և դրանց առաջարկի կազմն ու կառուցվածքը.

- ստեղծել օտարերկրյա ուղղակի ներդրումներն իրապես խրախուսող համապատասխան օրենսդրական դաշտ.

- ձևավորել երկարաժամկետ (ներդրումային) վարկերի տրամադրման ու դրանց երաշխիքային ապահովման մեխանիզմներ.

- նպաստել ներդրումները խրախուսող և խթանող կազմակերպությունների և մեխանիզմների գործունեությանը:

Առողջ և դինամիկ զարգացող ներդրումային շուկայի զարգացման համար անհրաժեշտ է խթանել՝

- երկարաժամկետ և արտոնյալ (ընդ որում՝ անտոկոս) ներդրումային վարկերի ներգրավումը.

- օտարերկրյա մասնավոր ներդրումների ներգրավումը.
- ներքին ռեսուրսների կուտակումը և ներդրումը.
- ձեռնարկությունների սեփական միջոցների ներդրումային նպատակներով օգտագործումը:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականությունը բարեփոխման կարիք ունի, որի ապացույցն են հարկման մեթոդների ու սկզբունքների, հարկման արդյունավետության պահանջների անբավարարությունը, տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ անհավասար մաքսային ռեժիմի կիրառումը, հարկային բեռի անհամաչափ բաշխման մակարդակը, օրենսդրաիրավական ակտերի անկատարությունը: Ընդհանուր առմամբ, Հայաստանում սահմանված հարկատեսակների բազան լիարժեք հարկման դաշտում ներառելը հարկային եկամուտների ավելացման չօգտագործված մեծ ներուժ ունի, ընդ որում՝ առանց հարկային դրույքաչափերի բարձրացման կամ նոր հարկեր սահմանելու: Հետապնդելով հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակ՝ մեր երկրում պետք է լուծվեն հատկապես հետևյալ խնդիրները.

- համախառն ներքին արդյունքի նկատմամբ հարկերի հարաբերության բարձրացումը.

- ներդրումային ակտիվության և զբաղվածության խթանմանը նպաստող հարկային համակարգի զարգացումը և կայուն բարձր տնտեսական աճի նկատմամբ առավելագույն չեզոքության պահպանումը.

- հարկման դրույքաչափերի բարձրացումից հնարավորինս խուսափումը.

- հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը, հարկային ու մաքսային մարմինների և տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների որակական բարելավումը.

- հարկային համակարգի պարզեցումը, հարկային օրենսդրությունում գործող հարկային օրենքների համախմբումը միասնական սկզբունքներով.

- հարկային և մաքսային օրենսդրության պարզեցումը և օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության գործուն մեխանիզմների զարգացումը.

- հարկերի վճարման հարցում համահավասարության արմատավորումը.

- հարկման հորիզոնական արդարության սկզբունքի լիարժեք կիրառումը՝ միաժամանակ նվազեցնելով հարկերի վերաբաշխողական դերը.

- հարկային քաղաքականության սահմանված սկզբունքների կայունությունը և հարկերի վճարման մեխանիզմների բարելավման շարունակականությունը:

Յուրաքանչյուր պետության բյուջեի ձևավորման հիմնական աղբյուրը հարկային մուտքերն են: Զարգացման ներկա փուլում կառավարությունը պետք է կարևորի ինչպես այդ եկամուտների մակարդակը, այնպես էլ դրանց ապահովմանն ուղղված վարչարա

րության ժամանակակից և հետևողական միջոցառումների իրականացումը<sup>5</sup>:

Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով հարկային մարմինները տնտեսավարող սուբյեկտների համար, կարծում եմ, պետք է ստեղծված խնդիրները հասցնեն նվազագույնի՝ սահմանելով հաշվետվությունների և գրանցումների վարման պարզ և սպառիչ պահանջներ, իրականացնելով սահմանափակ և արդյունավետ ստուգումներ, ապահովելով հարկային ծառայության գործունեության անհրաժեշտ թափանցիկություն: Այդպիսի խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է մշակել հարկային վարչարարության հստակ ռազմավարություն, սահմանված նպատակներ ու դրանցից բխող միջոցառումների ծրագիր: Հարկային քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի կայուն պետական եկամուտների ապահովումը՝ «դեմքով դեպի հարկատուն» սկզբունքի գերակայությամբ: Հարկային համակարգի նպատակային, իրատեսական և վերահսկելի բարեփոխումները կբարելավեն գործարար միջավայրը, կխթանեն տնտեսական աճը և որպես հետևանք՝ կապահովեն հարկային եկամուտների աճ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոշոր հարկատուներն ապահովում են բյուջեի հարկային մուտքերի հիմնական մասը, անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել խոշոր բիզնեսի լիարժեք և ամբողջական, իրական ծավալներով հարկմանը: Խոշոր գործարարների կողմից հարկային պարտավորությունների կատարումն էականորեն կնպաստի հարկային համակարգի կայացմանն ու զարգացմանը: Ներկայումս հասարակական դիտարկումները ցույց են տալիս, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաև պետական մարմինների այլ աշխատակիցների մի ստվար զանգված իրենց հիմնական պարտավորությունների հետ իրականացնում են նաև ձեռնարկատիրական գործառույթներ: Պետք է ներդրվի այնպիսի մեխանիզմ, որը կբացահայտի և թույլ չի տա, որ կառավարության անդամները, պատգամավորներն ու պաշտոնատար բարձր դիրք զբաղեցնող այլ անձինք զբաղվեն գործարարությամբ, ընդ որում՝ միջնորդավորված ձևով: Նմանատիպ պաշտոնեական չարաշահումների և հովանավորչության հնարավորությունների նեղացման հետևանքով հարկային եկամուտների ձևավորման ընթացքում մեր հանրապետությունում նպատակահարմար է, որ կիրառվի հորիզոնական արդարության սկզբունքը:

Հարկային ոլորտում հանրային հսկողության դերը բարձրացնելու նպատակով պետք է հրապարակվեն խոշոր հարկային իրավախախտումների ու դրանց նկատմամբ հարկային ծառայության կիրառած գործողությունների, պատասխանատվության միջոցների մասին: Այս պարագայում նշված քաղաքականությունը կնպաստի

<sup>5</sup> **Բոստանջյան Վ., Դավթյան Ս.,** *Տնտեսական քաղաքականության ռազմավարության ուղղությունները անցումային փուլում (շուկայական տնտեսության արդի խնդիրները Հայաստանում)* Ե., 1997, էջ 229:

հարկ չվճարող կազմակերպությունների թվաքանակի նվազմանը և հարկային մշակույթի առաջխաղացմանը:

## **ОСНОВНЫЕ ЗАДАЧИ НЫНЕШНЕГО ЭТАПА НАЛОГОВЫХ РЕФОРМ В РА**

ГЕВОРКЯН Н. Л.

### **Резюме**

При формировании доходной части госбюджета республики следует учесть, что осуществляемая налоговая политика еще весьма далека от совершенства. Налоговый прессинг ложится на плечи добросовестных налогоплательщиков, в то время как ряд хозяйствующих субъектов всячески избегают оплаты налогов. При реализации налоговых реформ необходимо принять во внимание следующие факторы:

- Применение гибких механизмов налоговых льгот в отношении инвестиций в развитие таких отраслей, как производство, новые технологии, наука и образование.
- Предоставление “налоговых отпусков” тем организациям, которые своей продукцией вышли на внешние рынки.
- Снижение налогового груза путем расширения базы налогообложения.
- Дифференциация налоговых тарифов в разных отраслях экономики, с учетом необходимости осуществления активной структурной политики и обеспечения конкурентоспособности отечественных товаров.

В условиях слабого налогового администрирования снижение налогового груза должно сопровождаться упрощением налоговой системы, что позволит усилить налоговый контроль. В структуре налоговых доходов должно быть также изменено соотношение прямых и косвенных налогов госбюджета. Необходимо постепенно повысить удельный вес прямых налогов за счет косвенных. Важность решения существующих проблем требует осуществления коренных изменений в налогово-бюджетной сфере республики.